ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝

«---------- -» ---------- 2022 թ.

Digitally signed by GALOYAN VARDUHI
7705800268
Date: 2022.09.13 13:44:51 GMT+04:00

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<<ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանք գյուղի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Տասնմեկերորդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Թադևոսյան Ռուզան Նորիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022- 2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (դասարանի ընդհանուր բնութագիրը)

2022-2023 ուստարում Հայրավանքի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանում սովորում են 7 աշակերտներ՝ 5 տղա, 2 աղջիկ: Դասարանում բոլոր աշակերտները համախմբված են, ընկերասեր, պատրաստակամորեն կատարում են դասղեկի և դասավանդող ուսուցիչների հանձնարարությունները, նախաձեռնող են և պատասխանատու: Աշակերտները խնամքով են վերաբերվում դպրոցի գույքին, հետևում են դասասենյակի մաքրությանը:

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում**

2022-2032 ուստարում նախատեսվում է հետևյալ աշխատանքները

1. Ընտրել դասարանի ակտիվ, ձևավորել աշակերտական և ծնողական խորհրդի կազմը:

2. Առանձնակի ուշադրություն դարձնել աշակերտների ուսման առաջադիմության բարձրացմանը և կարգապահությանը:

3. Դասամատյանի, աշակերտական օրագրի և այլ փաստաթղթերի վարում (էլեկտրոնային):

4. Մասնագիտական կողմնորոշում:

5. Աշխատանք ծնողների հետ :

6. Սովորողի սոցիալական պաշտպանություն:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն

Աշակերտների հետ տանել ճիշտ հոգևոր դաստիարակչական աշխատանք, կարևորել եկեղեցու դերը հայերի կյանքում:Բացատրել աղանդավորների վտանգավոր ազդեցությունը և հնարավորինս հեռու պահել բոլոր տեսակի աղանդներից:

3.2 Գեղագիտական դաստիարակություն

Առաջնորդվել <<Գեղեցիկը փրկում է աշխարհը>> նշանաբանով: Կարողանան կարևորել գեղագիտական արժեքները, գնահատել գեղեցիկը, բարին և ճշմարիտը: Գեղեցիկը արտահայտել նաև խոսքով և աշխատանքով: Հարգանքով վերաբերվեն դիմացինին:

3.3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Սիրել հայրենիքը, լինել հայրենասեր, կարևորել սեփական մասնակցությունը հայրենիքի պաշտպանության գործում :Յուրովի լինել հայրենասեր և գործով ապացուցել այդ վեհ անվանը արժանի լինելը:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն

Դասապրոցեսին ցուցաբերել ակտիվություն: Բացատրել և պահանջել, որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

3.5 Աշխատանքային դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը, աշխատավոր մարդը: Դրսևորել աշխատասիրություն, նպատակասլացություն, կարողանան արժևորել և գնահատել մեծերի, սեփական և այլոց աշխատանքը:

3.6 Բնապահպանական դաստիարակություն

Աշակերտների մոտ ձևավորել բնության նկատմամբ հարգանք և խնամքով վերաբերմունք: Հնարավորության դեպքում կազմակերպել նաև ծառատունկ՝ մտածելով հետագա սերունդների մասին:

4. Դպրոց-ընտանիք կապը

Ավելի արդյունավետ դարձնել ընտանիք- դպրոց փոխազդեցության համակարգը՝ բարձրացնելով փոխադարձ վստահության մակարդակը:
Կազմակերպել ծնողական ժողովներ (թեկուզ և հեռավար) և անհատական զրույցներ:

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարվել է
I	Դասարանի ակտիվի ընտրություն:Կազմակերպչական հարցեր:		
II	Զրույց-քննարկում ,, Սովորողների իրավունքներն ու պարտականությունները,, թեմայով		
III	Անկախության անգնահատելի դերն ինձ համար: Հայրենիք, ազգ, մայրենի լեզու:		
IV	Բարձրացնենք հասարակական աշխատանքի հանդեպ աշակերտների պատասխանատվության զգացումը:		
V	Բոլորիս կյանքում մեծ է դպրոցի և ուսուցչի դերը: Սիրենք ու հարգենք մեր ուսուցիչներին:		
VI	Ինչպես ընտրել մասնագիտություն:		
VII	Տարբեր սերունդների անխուսափելի բախումներ և դրանց ճիշտ հանգուցալուծումները:		
VIII	Բարոյականության դասերը մարդկության պատմության մեջ: Անտարբեր չլինենք ուրիշի ցավ ու վշտի հանդեպ:		
IX	Վնասակար սովորույթների ազդեցությունը մարդու օրգանիզմի վրա:		
X	Ի՞նչ է կարծրատիպը: Կարծրատիպերի առաջացման պատճառները:		
XI	Զրույց –քննարկում ,, Բարձր դասարանցիների ազատ ժամանակը ,, թեմայով:		
XII	,,Ինչպես պաշտպանվել բնական աղետներից,, թեմայով զրույց-քննարկում:		
XIII	1-ին կիսամյակի արդյունքների նախնական ամփոփում:		
XIV	Պատվով փակենք 1-ին կիսամյակը: Ամանորյա շնորհավորանքներ, տոնական օրերին զգուշության և զգոնության պահպանում:		
XV	Երկրորդ կիսամյակի խնդիրները:		
XVI	Քննարկում ,, Լսելու կարողություն,, թեմայով:		

XVII	,, Հայ Զինվորը անպարտելի է ,, թեմայով զրույց-քննարկում։		
XVIII	Զրույց ,, Բարեկամն ու ընկերը,, թեմայով ։		
XIX	,, Երկիր, որտեղ կուզեի ապրել,, զրույց-քննարկում։		
XX	Ինչ կարելի է գրել և ինչ չի կարելի գրել թերթերում։		
XXI	Խոսենք ոսկեղենիկ հայերենով։ Մայրենիի օր , շաբաթ, ամիս։		
XXII	Մասնագիտություններ, որոնց մասին երազում են երեխաները։Ինչ է պետք դրան հասնելու համար։		
XXIII	,,Կանանց միջազգային օր,, Շնորհավորական բացիկներ մեր ձեռքով պատրաստած։		
XXIV	Բանավեճ ,, Գեղեցիկն ու տգեղը մեր կյանքում,, թեմայով։		
XXV	Լինենք մեծահոգի , ներողամիտ, հանդուրժող, հասկանանք միմյանց և ուրիշներին։		
XXVI	Բանավեճ ,, Արդյոք միշտ են ծնողները ճիշտ,, թեմայով։		
XXVII	Ինչ կուզեի պատմել ամսագրերի ու թերթերի թղթակիցներին ։		
XXVIII	Հայոց մեծ եղեռնի տարելից։ Ինչ է փոխվել 1915 թ. -ից հետո։		
XXIX	Սպորտով զբաղվելը նորաձևություն է , թե առողջության գրավական։		
XXX	Դպրոցի բակի, ծաղկանոցի խնամք։ Փխրեցում, էտում և մաքրում։		
XXXI	,, Եթե ես երկրի նախագահը լինեի,, թեմայով շարադրություն։		
XXXII	Մարդ, որին կուզեի նմանվել։		
XXXIII	Ինչ եմ երազում և ինչ եմ անում դրան հասնելու համար։		
XXXIV	Կիսամյակային և տարեկան գնահատականներով ուստարին փակենք առանց անբավարարի։		